Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
հուլիսի 2-ի N 756 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԱՐՄՀՈԼԴԻՆԳ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Սույն ծրագրով առաջարկվում է իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք միտված են Հայաստանի Հանրապետության տնտեսական աճի արագացմանը: Զգալի ուժեր են ուղղվելու հայկական արտահանման խթանմանն ու դիվերսիֆիկացմանը, միջազգային տնտեսական միջավայրում ընկերությունների ներգրավմանը: Ծրագրով առաջարկվող միջոցառումները կնպաստեն Հայաստանի առաջ ծառացած տնտեսական խնդիրների լուծմանը:

Սույն ծրագիրն առաջարկում է արտահանման ծրագրի նախագիծ՝ առաջիկա երեք տարիների համար: Ընկերությունների խումբը կգործի և որպես արտահանող, և որպես ներդրող:

<u>Բաժին 1. Ծրագիրը ներկայացնող ռեզիդենտ հարկ վճարողների ցանկ</u>

Ծրագրում ներգրավված հարկ վճարողների ցանկը ներառում է հետևյալ ընկերությունները՝

NN ը/կ	Անվանումը	Տնօրեն	Հասցեն	Պետա-կան գրանց-ման համար	ՀՎՀՀ	Նշումներ
1.	«ԱՐՄՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ	Գոռ Բարոյան	քաղ. Երևան, Տերյան 69	03Ա1012505	02637286	
2.	«ԻՆԺԻՆԵՐԻՆԳ» ՓԲԸ	Ռազմիկ Չիտչյան	քաղ. Երևան, Տերյան 69	03Ա1012692	02635549	
3.	«ԱՐՄԻՆՎԵՍՏ» ՓԲԸ	Գոռ Բարոյան	քաղ. Երևան, Տերյան 69	03Ա1012690	02635522	

4.	«ԷՆԵՐԳՈՍՏՐՈՅ» ՓԲԸ	Սուրիկ Պողոսյան	քաղ. Երևան, Տերյան 69	03Ա1012688	02635506	
5.	«ԱՐՄՍՏՐՈՒԿՈՄ» ՓԲԸ	Հովհաննես Գասպարյան	քաղ. Երևան, Տերյան 69	03Ա1012686	02635514	
6.	«ՍՏՐՈՅՊՐՈՅԵԿՏ» ՓԲԸ	Ռազմիկ Չիտչյան	քաղ. Երևան, Տերյան 69	03Ա1012671	02639497	
7.	«ՖԱՐՄԿՈ» ՓԲԸ	Ռազմիկ Չիտչյան	քաղ. Երևան, Տերյան 69	03Ա1012644	02639462	
8.	«ՍԵՎԵՐՍՏՐՈՅ» ՓԲԸ	Ռազմիկ Չիտչյան	քաղ. Երևան, Տերյան 69	03Ա1012625	02639446	
9.	«ԱԿՎԻԼՈՆ ԹՐԵՅԴ» ՓԲԸ	Գոռ Բարոյան	քաղ. Երևան, Տերյան 69	03Ա1012015	02639318	

Բաժին 2. Արտահանման ծրագրի չափանիշները

2.1. Արտահանման ծրագրի ծավալները

Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է ապահովել արտահանման հետևյալ ծավալները՝

2015 թ.	2016 թ.	2017 թ.
51 միլիարդ դրամ	56 միլիարդ դրամ	66 միլիարդ դրամ

NN ը/կ	**Անվանումները** մլրդ դրամ	**2015 թ.**	**2016 թ.**	**2017 թ.**
1.	Ապրանքներ («Արտահանում» մաքսային ընթացակարգով ՀՀ տարածքից արտահանում և(կամ) տեղափոխում ԵՏՄ երկրներ)	15-17	20-22	24-26
2.	Աշխատանքներ (այդ թվում՝ շինարարական)	16-18	16-18	18-20
3.	Ծառայություններ (այդ թվում՝ ֆակտորինգային, լիզինգային, խորհրդատվական)	17-19	19-21	21-23
	Ընդհանուր միջինը տարվա համար	51	56	66

Արտահանման ծրագրի քաղաքականությունը

Արտահանման ծրագրի քաղաքականությունն ուղղված է Հայաստանի Հանրապետությունից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արտահանման խթանմանը:

2.2. Արտահանման շուկաները և խոշոր մրցակիցները

Արտահանման շուկաներ **ԵՏՄ երկրներ**

Խոշոր մրցակիցներ **ԵՏՄ ռեզիդենտ ընկերություններ**

2.3. Ապրանքների ցանկը («Արտահանում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանում և (կամ) տեղափոխում ԵՏՄ երկրներ) և արտադրող կազմակերպություններ

ԵՏՄ արտաքին տնտեսական գործունեության դասակարգիչով (հաստատված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 16-ի N 54 որոշմամբ) նախատեսված բոլոր ապրանքների խմբերը, բացառությամբ օրենքի 33-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների:

2.4. Շինարարության ոլորտում իրականացվող աշխատանքների տեսակները՝

1) բնակելի, հասարակական և արտադրական շենքերի և շինությունների կառուցման, վերակառուցման, նորոգման շինմոնտաժային և նախագծային աշխատանքներ.

2) բարեկարգման և արտաքին ինժեներական հաղորդակցությունների իրականացում:

2.5. Աշխատատեղեր և այլ սոցիալական միջոցառումներ

Սույն ծրագրում նշված արտահանման ծավալները կապահովեն աշխատանքների հետևյալ ծավալները՝

NN ը/կ	Անվանումը *Մարդ*	2015թ.	2016թ.	2017թ.
1.	Ապրանքներ («Արտահանում» մաքսային ռեժիմով ՀՀ տարածքից արտահանում և(կամ) տեղափոխում ԵՏՄ երկրներ)	8-10	10-12	12-14
2.	Աշխատանքներ	1000-1200	1100-1300	1200-1400
3.	Ծառայություններ	7-9	8-10	10-12

Նախատեսվում է, որ միջին աշխատավարձի չափը կկազմի 400,000-600,000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ